ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1.

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բնական գիտությունների ֆակուլտետի խորհրդի նիստի

28 օգոստոսի 2014թ.

Նախագահ՝ Մ. Ա. Զաքարյան

Քարտուղար՝ Հ. Ս. Գասպարյան

Ներկա էին խորհրդի 7 անդամներ:

ՕՐԱԿԱՐԳ

1. *2014-15թթ. ուս. տարվա I կիսամյակի դասացուցակների քննարկում և հաստատում:*
   /զեկ. Մ. Ա. Զաքարյան/
2. *Խորհրդի աշխատանքային պլանի հաստատում:*
   /զեկ. Մ. Ա. Զաքարյան/
3. *Ուսումնական գործընթացի կազմակերպում:*
   /զեկ. Մ. Ա. Զաքարյան/

ԼՍԵՑԻՆ- Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի ժ/պ, խորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր Մ. Ա. Զաքարյանը:

Օրակարգի առաջին հարցի մասին զեկուցումով հանդես եկավ խորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը: Նա ներկայացրեց 2014-15թթ. ուստարվա I կիսամյակի դասացուցակները ըստ մասնագիտությունների: Դասացուցակը կազմվել է I, II, III կուրսերի համար՝ երկշաբաթյա /համարիչ և հայտարար/ գրաֆիկով, ըստ ամբիոնային ուսումնական պլանների:

Դասախոսների պահանջարկ չկա, ըստ դասաժամերի բախշվել են բոլոր առարկաները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- «Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության» ամբիոնի վարիչ Ա. Վ. Ցուցուլյանը: Նա նշեց, որ դասացուցակը կազմվել է ուսումնական պլանին համապատասխան: Համակարծիք լինելով ներկայացված դասացուցակին նա առաջարկեց հաստատել 2014-15թթ. ուստարվա I կիսամյակի դասացուցակը:

Այնուհետև ելույթ ունեցավ ֆակուլտետի արհմիության նախագահ Գ. Վ. Գուլակյանը: Նա ևս ընդգծեց արդեն բազմիցս քննարկված և կազմված ուսումնական պարապմունքների դասացուցակների ճշտությունը և որոշեցին ներկայացնել տնօրենություն հաստատելու:

ՈՐՈՇԵՑԻՆ-Ներկայացնել տնօրենություն հաստատելու 2014-15թթ. ուստարվա I կիսամյակի դասացուցակը:

Օրակարգի երկրորդ հարցի մասին հանդես եկավ խորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը: Նա ներկայացրեց 2014-15թթ. ուստարվա ֆակուլտետի խորհրդի աշխատանքային պլանը:

Քննարկումից հետո եղավ ընդհանուր առաջարկ հաստատելու 2014-15թթ. ուստարվա խորհրդի աշխատանքային պլանը:

ՈՐՈՇԵՑԻՆ- 1. Ներկայացնել տնօրենություն հաստատելու 2014-15թթ. ուստարվա խորհրդի աշխատանքային պլանը:

Օրակարգի երրորդ հարցի մասին ֆակուլտետի խորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը հանդես եկավ ուսումնական գործընթացի կազմակերպման հետ կապված ներֆակուլտետային գործընթացի մասին հանձնարարականներով:

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Մ. Ա. ԶԱՔԱՐՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ. Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ